Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վարդան Արտավազդի Գևորգյանի (ծնված՝ 21.01.1966թ.) դիմումը, Անտառամուտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17.02.1991թ. N-2 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Փամբակ համայնքի Անտառամուտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-015-0108-0024 կադաստրային ծածկագրով 0,133093 հա վարելահողի չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Վարդան Արտավազդի Գևորգյանի՝ (ծնված 21.01.1966թ.) սեփականության իրավունքը 06-015-0108-0024 կադաստրային ծածկագրով 0,133093 հա վարելահողի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 603-Ա

ԱՆՆԱ ԱՐԹՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով՝ հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը աճուրդով վաճառելու մասին 18.07.2022 թվականի թիվ 40 արձանագրությունը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Փամբակ համայնքում 18.07.2022 թվականին անցկացված աճուրդում հաղթող ճանաչված Աննա Արթուրի Հարությունյանին օտարել լոտ 12. 06-070-0063-0637 ծածկագրով 0.15452 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 750000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամով:

2. Տասնօրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո, Աննա Արթուրի Հարությունյանի հետ կնքել հողամասի առավաճառքի պայմանագիր:

3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերն իրականացնել Աննա Արթուրի Հարությունյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 25
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 604-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԻԼՅԱ ՄՈՒՍԱԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈԼԱՅԻՆ
ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության զբնքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Տեղական
տնօրենքի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ
հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի բ. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի
ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 13-Ն որոշման հավելվածի 1-ին
մասի 11-րդ կետի բ. ենթակետով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լիլյա
Մուսաեյանի 2022 թվականի հուլիսի 25-ի հայտը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Անհատ ձեռնարկատեր Լիլյա Մուսաեյանի /ՀՎՀՀ 66996882/ հայտը
բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 37
փողոց, շենք 1 հասցեում (37,23 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և
ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի
թույլտվություն 01.07.2022թ-ից մինչև 30.09.2022թ-ի (3-րդ եռամսյակի) համար:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին
կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական
տնօրենքի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը
հավաստող փաստաթուղթը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հուլիսի 25
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

• 25 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 605-Ա

06-070-0058-0037 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ
ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ
ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին, Նորմատիվ իրավական ակտերի մասին, ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի „գ“ ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Կարեն Վազգենի Խաչատրյանի (ծնված 09.04.1972) դիմումը, „Արսեն Իսահակյան Ռուդիկի” ԱԶ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2022YYLEBH (04.05.2022թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը, 27.05.1987թ.-ին կազմված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0058-0037 կադաստրային ծածկագրով 0,187720 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա ինքնական կառուցված շինությունների չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Կարեն Վազգենի Խաչատրյանին (ծնված 09.04.1972), պատկանող 06-070-0058-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,187720 հա մակերեսով հողամասի և

հողամասի վրա առկա մինչև 2001 թվականը կառուցված 372.98 ք/մ ընդհանուր մակերեսով շինությունների նկատմամբ համատեղ սեփականության իրավունքը:

3.2001 թ-ից հետո կառուցված ինքնական շինությունների օրինականացումը կկատարվի օրենքով սահմանված կարգով:

4.Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Փամբակ համայնք գ. Մարգահովիտ 7-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 27 բնակելի տուն:

5.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 23 մայիս 2022թ-ի 364-Ա որոշումը և կադաստրային գործում առկա քաղվածքները:

6.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 25
գ.Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 606-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ
ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի բ. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 13-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 11-րդ կետի բ. ենթակետով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուհի Վարդևանյանի 2022 թվականի հուլիսի 25-ի հայտը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Անհատ ձեռնարկատեր Արմենուհի Վարդևանյանի /ՀՎՀՀ 827328863/ հայտը քավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 18 փողոց, 25 հասցեում (23,27 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 01.07.2022թ -ից մինչև 30.09.2022թ-ի (3-րդ եռամսյակի) համար:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղակա ն տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավա ստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Հուլիսի 25
գ. Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 607-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Փամբակ համայնքի Ազնվաճոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-010-0002-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Փամբակ համայնք գյուղ Ազնվաճոր, 4-րդ փողոց 19 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 25
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 608-Ա

06-070-0038-0010 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, հաշվի առնելով Կարեն Սեյրանի Կոծինյանի (ծնված՝ 18.04.1968թ.) դիմումը, “Գասպար Վեքիլյան” ԱԶ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ. թիվ 02 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցամատյան 1237,7151, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 5-րդ փողոց, 32/4 հողամաս հասցեում գտնվող 06-070-0038-0010 ծածկագրով 0.13768 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. 06-070-0038-0010 ծածկագրով 0.13768 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Կարեն Սեյրանի Կոծինյանի (ծնված՝ 18.04.1968թ.), Սուսաննա Ստյոպայի Անանյանի (ծնված՝ 10.10.1973թ.) սեփականության իրավունքը:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 25
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 609-Ա

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՑ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոռու մարզի Փամբակ համայնքի Ձորագետ բանակավայրի բնակիչ Վահե Արմենի Ղալայանը (ծնված՝ 15.10.1989 թվականին, հաշվառման հասցե՝ Լոռու մարզ, Փամբակ համայնք, գ. Ձորագետ, 1 փող., 111 շ, 18, բնակության հասցե՝ ք. Երևան, Խաղաղ-Դոնի փող, 27/145, ՀՇՀ՝ 2510890174, Ա/Հ փաստաթուղթ՝ 013238514), հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2022 թվականի հուլիսի 08-ին ՀՀ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Փամբակի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով: <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը՝

Համաձայն Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 2022 թվականի հուլիսի 07-ին տրված զեկուցագրի և փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունների վերաբերյալ E- Community պաշտոնական կայքով հաշվարկված ամփոփ-տեղեկանք ցուցատախտակի տվյալների՝ քննարկվող փոխադրամիջոցները հանդիսանում են Վահե Ղալայանի սեփականությունը, որոնք իրավահարաբերությունների պահին գործող <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտ: Փոխադրամիջոցների համար վճարման ենթակա հաշվարկվող գույքահարկը կազմում է 15.331.908 /տասնհինգ միլիոն երեք հարյուր երեսունմեկ հազար ինը հարյուր ութ/ ՀՀ դրամ, ինչը 2014+2021 թվականների ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Վահե Ղալայանի կողմից նշված

Ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 1.334.001 /մեկ միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար մեկ/ ՀՀ դրամի չափով:

2022 թվականի հուլիսի 08-ին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի հուլիսի 26-ին վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Վահե Ղալայանը /հիմք՝ 08.07.2022 թ., փոստ. անդորրագիր L00104692522AM/: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լուծմանը:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության /2015 թվականի փոփոխություններով/ 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Իրավահարաբերությունների գործող <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված է հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու /հաշվառման/ վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման /գրանցման/ վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման /գրանցման/ բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստան Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները, (...) պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով

սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված սահմանված ժամկետից ուղացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Այսպիսով, Վահե Ղալայանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենքով սահմանված կարգով կարգով չի վճարել սեփականության իրավունքով իրեն պատկանող փոխադրամիջոցների գույքահարկը, ինչի հետևանքով գույքահարկի գծով չմարած հարկային ամբողջ պարտավորությունը կազմում է կազմում 16.665.909 /տասնվեց միլիոն վեց հարյուր վաթսուհինգ հազար ինը հարյուր ինը/ ՀՀ դրամ, որից՝ ապառք՝ 15.331.908 (տասնհինգ միլիոն երեք հարյուր երեսունմեկ հազար ինը հարյուր ութ) ՀՀ դրամ, պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ՝ 1.334.001 (մեկ միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար մեկ) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, իրավահարաբերությունների պահին գործող <<Գույքահարկի մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-61-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Վահե Արմենի Ղալայանից հօգուտ Փամբակ համայնքի Ձորագետ բնակավայրի բյուջե գանձել ընդհանուր 16.665.909 (տասնվեց միլիոն վեց հարյուր վաթսուհինգ հազար ինը հարյուր ինը/ ՀՀ դրամ, որից՝ ապառք՝ 15.331.908 /տասնհինգ միլիոն երեք հարյուր երեսունմեկ հազար ինը հարյուր ութ) ՀՀ դրամ, պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ՝ 1.334.001 /մեկ միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար մեկ/ ՀՀ դրամ /գույքահարկի փոխադրամիջոցների համար՝ վճարման հաշվեհամար՝ 900235421030/:

Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Փամբակ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան:

Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակմա պահից, azdarar.am -ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 610-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՈՒՄ ԳՅՈՒՂԻ 6-ՐԴ ՓՈՂՈՅ ԹԻՎ 16
ՀԱՍՅԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 2005թ ղեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի <<գ>> ենթակետով և 48-րդ կետով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին“, ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով հիմք ընդունելով Սուսաննա Վոլոդյայի Գրիգորյանի /ծնված՝ 27.08.1962թ./ դիմումը, Բազում գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991թիվ 02 որոշումից քաղվածքը <<Գասպար Վեքիլյան>> ԱԶ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Փամբակ համայնքի Բազում բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-023-0066-0002 կադաստրային ծածկագրով 0, 10638 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-023-0066-0002 կադաստրային ծածկագրով 0, 10638 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման՝ հողամասի նկատմամբ Սուսաննա Վոլոդյայի Գրիգորյանի /ծնված՝ 27.08.1962թ./ սեփականության իրավունքը:

3. 06-023-0066-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Փամբակ համայնք գ. Բազում 6-րդ փողոց թիվ 16 հողամաս:


4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի կողմից 18 մայիսի 2022թ.-ին տրված N 351-Ա որոշումը և 04 հուլիսի 2022թ.-ին տրված N 519-Ա որոշումը:

5.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 26
գ.Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 611-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0080-0042 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ, 4-րդ փողոց, 7-րդ փակուղի 1 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



2022թ. Հուլիսի 26
գ.Փամբակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 612-Ա

ՅՈՒՐԻԿ ԽԱՏԻՎԻ ՄԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, "Տեղականի նքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցամատյան 1281, Յուրիկ Խատիվի Մկոյանի /ծնված 10.01.1950թ./ լիազորված անձ Գոհար Յուրիկի Մկոյանի ծնված /18.02.1976թ./ դիմումը, չափազրման համաձայնությունը և 2022N3QNZZK /26.07.2022թ./ մուտքագրման ծածկագրով տեղեկանքը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող Յուրիկ Խատիվի Մկոյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 1710397/ 06-023-0036-0007 ծածկագրով 0.127555 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում իր կողմից ինքնական կառուցված այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, 1989թ. -ին կառուցված 55.50 քմ արտաքին չափերով բնակելի տունը, 1989 թ. -ին կառուցված ընդհանուր 33,17 քմ արտաքին չափերով մառանը և 1998թ. -ին կառուցված 27,96 քմ արտաքին չափերով ծածկը:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային կատարաթանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՅՈՒՐԻՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 26
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 613-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Փամբակ համայնքի Վահագնի գյուղի վարչական տարածքում գտնվող 06-103-0060-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Փամբակ համայնք գյուղ Վահագնի 2-րդ փողոց 8 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 26
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 614-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Լոռու մարզի Փամբակ համայնքի Մարզահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0038-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնք գ. Մարզահովիտ 5-րդ փողոց թիվ 32/5 հողամաս հասցե:


2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 26
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 615-Ա

06-070-0095-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ
ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 42-րդ 43-րդ հոդվածով, „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին“, ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով հիմք ընդունելով Մարիետա Սամսոնի Անտինյանի /ծնված՝ 07.07.1947թ./ դիմումը, <<ԻՆԷՔՍ>> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2022EQRD73 /27.06.2022թ./ մուտքագրման ծածկագրով տեղեկանքը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 15-րդ փողոց 18/1 կիսակառույց հասցեում գտնվող 06-070-0095-0024 կադաստրային ծածկագրով 0,06255 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և վերջինիս վրա 1996թ-ին ինքնական կառուցված կիսակառույց շինության և պարիսպի հատակագիծը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. 06-070-0095-0024 կադաստրային ծածկագրով 0,06255 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող 4.90քմ մակերեսով պարիսպի նկատմամբ վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Մարիետա Սամսոնի Անտինյանի /ծնված՝ 07.07.1947թ./ սեփականության իրավունքը:

3. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-070-0095-0024 կադաստրային ծածկագրով 0,06255 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում առկա է այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի

իրավունք չառաջացնող 1996թ.-ին ինքնակամ կառուցված 64,43 քմ արտաքին մակերեսով կիսակառույց շինություն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2022թ. Հուլիսի 26
գ.Փամբակ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 616-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25 ՀՈՒԼԻՍ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 598-Ա ԵՎ
599-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 33-րդ
հոդվածով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Փամբակ համայնքի ղեկավարի 25.07.2022թ-ի թիվ 598-Ա որոշման 1-ին
կետում „բնակելի կառուցապատման, բառերը փոխել „այլ,,-ի:
2. Փամբակ համայնքի ղեկավարի 25.07.2022թ-ի թիվ 599-Ա որոշման 1-ին
կետում „բնակելի կառուցապատման, բառերը փոխել „այլ,,-ի:
3. Փոփոխություններ կատարել նաև 598-Ա և 599-Ա որոշումների հիմք
հանդիսացող փոստաթղթերում /արձանագրություն/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. Հուլիսի 26
գ. Փամբակ